ՀԱՄԼԵՏ ԴԱՎԹՅԱՆ

# ՎՐԱՑ (ՔԱՐԹԼԻԻ) ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐՑԸ ԴՎԻՆԻ Գ. ԺՈՂՈՎՈՒՄ

Եկեղեցիների բաժանումը կամ պառակտումը արձանագրվում է եկեղեցական ժողովներում եւ հաստատվում դրանց ընդունած որոշումներով: Սա է միակ ճանապարհը: Եթե ժողովի վավերացում չի կատարվում, ապա ցանկացած պահի հնարավոր է բաժանումն անջատողականություն համարել, իսկ հեռացողի դեմ որոշակի քայլեր ձեռնարկել, որպես աղանդավորի կամ հերձվածողի: Հայերի եւ քարթվելների եկեղեցական միասնության տրոհումը տեղի ունեցավ 608/9 թվականին: Ընդունված է, որ դա 607-ին սկսված Դվինի Գ. ժողովի վերջին արարն էր: Այնտեղ էլ հաստատվեց Հայաստանյայց եկեղեցու ենթակայությունից Քարթլիի եկեղեցու փաստացի դուրս գալը:

Ստորեւ կաշխատենք պարզել մի քանի մանրամասն, որոնք մեզ թույլ կտան համապատասխան շեշտադրումներ կատարել: Մեկը թե՝ արդյոք ժողովին մասնակցե՞լ է Վրաց եկեղեցու որեւէ ներկայացուցիչ: Պատմությունը վկայում է, որ նման բան չի եղել, որովհետեւ նախաձեռնող Սմբատ իշխանը նրա հոգեւոր պետին պարզապես արգելել էր մասնակցել ժողովին: Ուխտանեսը գրում է. «Կիւրիոնը չկանչուեց այդ հարսանիքին (ժողովին.- Հ.Դ.), քանզի խոտան համարուեց երկակի կորստեան համար»[1]: Այսինքն՝ վճիռը, պատժական որոշումը կար արդեն, իսկ շրջաբերականը, որը ժողովից հետո պիտի տարածվեր, ընդամենը դրա պաշտոնականացումն էր լինելու: Սակայն նման կանխակալության պատճառն այն չէր, որ Կյուրիոնն իր եպիսկոպոսներով քաղկեդոնահավան էր դարձել: Հայոց աշխարհի մեծ մասն էր Քաղկեդոնի ժողովն ու Լեւոնի տոմարը ընդունել, եւ հենց Հայաստանյայց Եկեղեցու գիրկը նրանց վերադարձնելու համար էր Սմբատն անձամբ զբաղվում ժողովի կազմակերպման հարցերով, կանչում, զրուցում ու բանակցում յուրաքանչյուրի հետ, պայմանավորվում, ապա ամեն մեկից պահանջում գրավոր, անձնական ստորագրությամբ հաստատել սեփական հավատո ուղղությունը: Կյուրիոնն էլ կարող էր նրանց թվում լինել, բայց չկար: Կարող էր լինել, որովհետեւ նրա զբաղեցրած աթոռը ամենեւին հզոր ու արտոնյալ չէր ժողովին մասնակցող ոչ մի եպիսկոպոսի աթոռից:

Տեղի ունեցածն աննախադեպ էր թեկուզ այն պատճառով, որ նախկինում քարթվելական պատվիրակությունը միշտ մասնակցել էր հայոց եկեղեցական ժողովներին[2]: Կյուրիոնին արգելվեց ժողովի գալ, եւ նրա հարցը հետաձգվեց, որովհետեւ կարգապահական բնույթի էր: Լեոն, նկատի ունենալով Գիրք թղթոցը, գրում է. «Այդ ժողովը...

1 **Ուխտանէս**, Հայոց պատմութիւն, Երեւան, 2006, էջ 152:
2 Տե՛ս անդ, էջ 171. «Գիրք թղթոց», էջ 51:

մշակել եւ վավերացրել էր մի քանի կանոններ, ուղղված այն հոգեւորականների դեմ, որոնք գիտությամբ թե անգիտությամբ հարում են այս կամ այն աղանդին, մասնավորապես քաղկեդոնականության: Կանոններն օրենսդրում էին խիստ վարմունք այդպիսիների նկատմամբ, պատիժներ եւ հալածանք, նրանք հանձնարարում էին մանավանդ զգույշ լինել, որ այդպիսի հոգեւորականներ, նույնիսկ գղջալուց եւ նորից Հայոց Եկեղեցու գիրկը վերադառնալուց հետո պաշտոններ չստանան»[3]:

Ի դեպ, կանոնները ժողովը չէր ընդունել, այլ նախքան ժողովը կազմել էին Սմբատ Բագրատունի իշխանը, Վրթանես տեղապահը եւ Սյունիքի եպիսկոպոս Քրիստափորը[4]: Բայց դա չէ կարեւորը, այլ որ՝ իսկապե՞ս այդ կանոնները կիրառվեցին Կյուրիոնի համար: Օրմանյանը գրում է. «Եւ իրօք ալ Վրթանէսի եւ Կիւրիոնի միջեւ փոխանակուած գիրերէն եղքը՝ հնար չէր Կիւրիոնը իբր ժողովական ընդունիլ: Ժողովի գումարուած եպիսկոպոսներէն կ'երեւի թէ կային ոմանք, որ 2-րդ կանոնին ներքեւ կ'իյնային, այսինքն է, որոնց դարձին ընդունելութիւնը եւ իրենց աթոռներուն վրայ վերահաստատուիլը Կաթողիկոսին վերապահուած էր»[5]: Մինչ այդ Օրմանյանն արդեն շեշտել էր, որ «Կաթողիկոսին վերապահուած կէտը, հարկաւ ընտրություններէն եղքը թողուած կը նկատուի»[6]: Ինչպես գիտենք, «Վրթանէսի եւ Կիւրիոնի միջեւ փոխանակուած գիրերը» ավարտվեցին նրանով, որ Կյուրիոնը անձնական վիրավորանք հասցրեց Վրթանեսին՝ չկամենալով նույնիսկ նրա ուղարկած վերջին նամակն ընթերցել, այնուհետեւ անհնազանդություն հանդես բերեց՝ սպառնալով ուղղափառության հարցում իրենց վեճի համար դատավոր դարձնել Երուսաղեմի հայրապետին[7]: Այս է, ուրեմն, բուն պատճառը: Նման կեցվածքն անտարակույս պիտի դատապարտվեր ամենայն խստությամբ, սակայն դա պիտի կատարեր նորընտիր Կաթողիկոսը: Ահա թե ինչու՝ Կյուրիոնը չկանչվեց ժողովին, հարցման չենթարկվեց՝ Սմբատ իշխանի եւ Վրթանես տեղապահի սահմանած ժողովական կանոնների համաձայն: Ի միջի այլոց, եթե Ուխտանեսը չի հորինում, ապա այդ մասին քաջ գիտեր նաեւ Կյուրիոնը: Կարդում ենք. «Իր մտքում [Կյուրիոնը] խորհում էր, թե՝ «Երբ Հայաստանում կաթողիկոս նստի, դարձեալ իմ արածների մասին խնդիր է լինելու», [մտածում էր], որպէսզի զուցէ կարողանայ ինչոր հնարքներով այլ ձեւով խօսել, քանի որ արդէն տակաւին երկու ոտքով կաղում էր [հաւատքում]»[8]:

Կար նաեւ հրավեր չուղարկելու երկրորդ պատճառը (գուցե ավելի կարեւոր): Ուխտանեսն ասում է, որ «յունաց բաժնից եկածների մէջ կային հաւատից շեղուածներ (քաղկեդոնականներ.- Հ.Դ.), ուստի յետոյ եկան խոստովանութեան եւ գրաւոր կերպով Աբրահամի կողմից հաստատուեցին՝ ձեռնարկ տալով»[9]: Դրանց մասին կա նաեւ

3 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Երեւան, 1967, էջ 229:
4 Տես **Ս. Օրբելյան,** նշվ. աշխ., էջ 125:
5 **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 718:
6 Անդ, էջ 712:
7 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 141-142:
8 Անդ, էջ 121:
9 Անդ, էջ 152:

«Գիրք թղթոց» ժողովածուի մեջ. «Ոմանք յաղագս սնոտի փառասիրութեան եւ աչառութեան, եւ կէսք ակամայ բռնադատելք, եւ այլք առ տգիտութեան եւ կամ անձեռնհաս լինելոյ»[10]: Ուխտանեսը չի թաքցնում, որ հույների բաժնից եկած եպիսկոպոսների «մասին մի փոքրիկ կասկած կար, թէ մի գուցէ Կիւրիոնի անունն ու յիշելու անարժան յիշատակը ժառանգած լինեն»[11]: Փաստորեն իրավիճակն անկանխատեսելի էր: Կյուրիոնը համառ ու հաստատակամ մարդ էր, հետեւաբար՝ եթե նա հանկարծ ցուցադրաբար իրավունքներ բանեցներ կամ դավանաբանական վեճ սարքեր, ապա որքանո՞վ կարելի էր վստահ լինել, որ իրենց ճիշտ կպահեն նորադարձ քաղկեդոնականները: Ահա թե ինչու Սմբատը հեռատեսորեն գործեց եւ Կյուրիոնին պարզապես հեռու պահեց ժողովից: Նույն այդ պատճառով նա ժողովից հեռու պահեց նաեւ Մովսես Յուրտավեցուն: Ուխտանեսը թերահավատությամբ է գրում. «Ասում են, [որ] նա [Մովսեսը] այն ժամանակ մերձիմահ հիվանդացել էր եւ այդ պատճառով ժողովի չկարողացաւ գալ, նաեւ ոչ իսկ գրաւոր իմաց տալ կարողացաւ իր ցաւի ու հալածանքների մասին Կիւրոնի կողմից»[12]: Իրականում ոչ թե հիվանդությունն էր պատճառը, այլ որ՝ Մովսեսն այլեւս թեմական չէր: Այնուամենայնիվ, Կյուրիոնը եղե՞լ է Դվինում (թեկուզ ժողովից հետո), թե՞ ոչ: Ժողովն իր կազմով, այսինքն՝ բոլոր ժողովականները միասին քննե՞լ են արդյոք Կյուրիոնի ու Վրաց եկեղեցու հարցը: Ն. Մելիք-Թանգյանը գրում է. «609-610 թուին գումարուեց Դուինում ժողով մասնակցութեամբ հոգեւորական եւ աշխարհական անձանց, եւ դրանց միջոցով քննուեց Վրաց կաթուղիկոսի քաղկեդոնական լինելու խնդիրը, եւ ընդհանուր վճռով ընդունուեցին Վրացիք քաղկեդոնականներ՝ հետեւող իրանց կաթուղիկոս Կիւրիոնին եւ բոլորովին բաժանուած համարուեցին դաւանակից հայերից»[13]: Ա. Ղազարյանը գրում է. «Վրաց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը ճշտելու նպատակով էլ գումարվել է Դվինի Գ. ժողովը: Քննվել է Վրաց կաթողիկոսի քաղկեդոն. լինելու խնդիրը, եւ ընդհանուր վճռով բոլոր վրացիները համարվել են քաղկեդոնականներ՝ իրենց Կյուրիոն կաթողիկոսին հետեւողներ եւ դավանակից հայերից բաժանվածներ»[14]: Հասկանալի է գրված, բայց որտեղի՞ց այդ տեղեկությունը: Հաջորդը՝ միեւնույն եղանակով: «Այս խնդիրը (եկեղեցիների փոխհարաբերությունները.- Հ.Դ.) Քաղկեդոնական Եկեղեցու կողմից արծարծվեց եւ հատկապես հրատապ դարձավ հենց Դվինի 607 թ. ժողովի հրավիրման ժամանակ, երբ փառամոլ Կյուրիոնի դավանական պառակտիչ ձեռնարկումների հետեւանքով կասկածի տակ դրվեց Վրաց Եկեղեցու նկատմամբ Հայոց Եկեղեցու նվիրապետական առաջնությունը: Բնականաբար, նմանօրինակ հույժ կարեւոր խնդիրը կարող էր լուծվել ժողովական մակարդակով: Ամենայն հավանականությամբ, հենց Դվինի այդ ժողովը, իբրեւ հոգեւոր բարձրագույն կաճառ, իր հեղինակությամբ խնդրին դրական լուծում տվեց»,- գրում է Վ. Վարդանյանը[15]:

10 «Գիրք թղթոց», էջ 146:

11 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 154:

12 Անդ, էջ 161:

13 **Ն. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք 1-2, Շուշի, 1903-1905, էջ 389:

14 «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 277:

15 **Վ. Վարդանյան**, Դվինի 607 թվականի ժողովի շուրջ, «Էջմիածին», 2000, Գ., էջ 74:

Հետաքրքրական են մատենագիրների հաղորդած տեղեկությունները: Նախապես ափսոսանքով նշենք, որ վրաց մատենագրության մեջ որեւ հիշատակություն չկա Դվինի Գ. ժողովի վերաբերյալ, հետեւաբար պետք է ներկայացնենք միայն մեր աղբյուրները ժամանակագրորեն: Իրադարձություններին ժամանակակից մատենագիրը Սեբեոսն է (Է. դար), որը, սակայն, ամենասակավախոսն է: Նրանից ընդամենը տեղեկանում ենք, որ «երանելի Մովսես կաթողիկոսը վախճանվել էր, եւ... հայրապետության աթոռին նստեցրին Ռշտունյաց եպիսկոպոսին՝ Աբրահամին»[16]: Ինչպես տեսնում ենք, նա ո՛չ ժողովի, ո՛չ Կյուրիոնի մասին ոչ մի հիշատակություն չունի:

Հաջորդ հեղինակը Մովսես Կաղանկատվացին է (նրան վերագրվող «Աղվանից աշխարհի պատմությունը» ձեւավորվել է Է.-Ժ. դարերում): Սա եւս ոչինչ չի գրում մեզ հուզող հարցի վերաբերյալ, բայց արդեն տալիս է Կյուրիոնի անունը[17]: Հովհաննես Դրասխանակերտցին (Ժ դար) առաջինն է, որ ժողովին հատուկ դեր է հատկացնում: «Այնուհետեւ,- գրում է նա,- Աբրահամ մեծ հայրապետը քաջ Սմբատի եւ այլ նախարարների հրամանով Դվին քաղաքում բազմաթիվ եպիսկոպոսների ժողով արեց աստվածային անբիծ նախահնամությամբ ուշադրությամբ քննելով Աստվածաշունչը, եւ նրանք, ճշմարիտ իմացությամբ ծանոթանալով սուրբ հայրերի դավանությանը՝ նզովեցին Կյուրիոնին՝ Քրիստոսի եկեղեցու պառակտիչին, եւ անօրեն հերետիկոսության բոլոր հետազանդյալներին ու համախոհներին»[18]: Դրասխանակերտցին արդեն սկզբնաղբյուր է դառնում Վարդան Արեւելցու համար (ԺԳ. դար): Նա պատմում է, թե ինչպես տեր Աբրահամը «ձգտում է Կյուրիոնին դարձնել դեպի ուղղափառություն: Այդ պատճառով Դվինում ժողով են անում եւ անիծում Կյուրիոն հերետիկոսին»[19]: Նույն դարի մեր մեկ այլ նշանավոր հեղինակ Ստեփանոս Օրբելյանը, հայոց եկեղեցական ժողովները թվարկելիս արձանագրում է. «Դվինում կրկնված մյուս ժողովը՝ Աբրահամ կաթողիկոսի ղեկավարությամբ, որը վերարերում էր Վրաստանի պիղծ կաթողիկոս Կյուրիոնի բաժանվելուն ու Աղվանքի զատվելուն»[20]: Բայց ահա Կիրակոս Գանձակեցին (նորից ԺԳ. դար) չի շարունակում Վրաց եկեղեցու հարցի լուծումը վերագրել ժողովին: Ըստ նրա, Կյուրիոնը սկզբում արդարանում էր, թե Մովսես եպիսկոպոսն իրեն զրպարտում է, «իսկ երբ ասվեց, թե քննության ժողով պետք է լինի, որ այդ մասին իմանան, Կյուրիոնը բացարձակ ընդունեց Քաղկեդոնի դավանությունը: Երբ Աբրահամը տեսավ, թե ոչ մի օգուտ չեղավ, այլ ավելի անամոթացավ, այդ ժամանակ շրջաբերական թուղթ գրեց իր վիճակներին, որպեսզի վրացիների հետ բոլորովին չհաղորդակցվեն»[21]: Պատմիչն այնուհետեւ շարունակում է. «Այս ամենը ճշտությամբ քեզ կսովորեցնի Ուիսրանես եպիսկոպոսը, որովհետեւ նա բոլորը կատարելապես նկարագրել է՝ թղթերն ու

16 **Սեբեոս**, Պատմություն, Երեւան, 2005, էջ 121:
17 **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969, էջ 209-213:
18 **Հովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 75:
19 **Վարդան Արեւելցի**, Տիեզերական պատմություն, Երեւան, 2001, էջ 96:
20 **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 357:
21 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 47:

պատասխանները»[22]: Հետեւենք, ուրեմն, խորհրդին: Իսկ նա գրում է, որ Աբրահամը, արդեն ընտրյալ կաթողիկոս, այսինքն՝ 607 թ. ժողովի ավարտից հետո, նամակով հորդորում է Յուրտավի եպիսկոպոս Մովսեսին, թե «մի՛ յապաղիր սուրբ Զատկին այստեղ (Դվին.- Հ.Դ.) գալու, որպէսզի շատերին ուրախութիւն լինի: Նաեւ Կիւրիոնի ու վրացիների հոգեւոր գործն է առջեւում»[23]:

Հետեւապես, եթե Կյուրիոնի ու վրացիների հոգեւոր գործը ժողովից հետո դեռ առջեւում էր, ուրեմն հաստատ է, որ ժողովում Վրաց (Քարթլիի) եկեղեցու հարցը չի քննարկվել, ինչպես նաեւ Կյուրիոնը սույն ժողովին չի մասնակցել: Ընդ որում՝ Կյուրիոնն Աբրահամին ուղարկած իր առաջին պատասխան նամակում հենց այդ մասին է ասում՝ գրելով. «Ձեր գրած նամակին վերահասու եղայ եւ երանելի սուրբ Գրիգորի աթոռը ժառանգելուն [ձեր]՝ իմ տիրոջ արժանի լինելու առիթով եւ ձեր ողջութեան համար մեծապէս ուրախացայ եւ Աստծուց զոհ եղայ: ...Ես էի պարտաւոր գալ, աղօթել ձեր սուրբ եկեղեցիներում եւ ձեր կողմից օրհնուել, կամ իմ աշակերտներին ուղարկել, որ ձեր սրբութեան ողջոյնը մեզ բերէին: Բայց չար ժամանակի եւ երկրիս կարիքների պատճառով խափանեցինք [դա]»[24]:

Կարծում ենք՝ ուրիշ ապացույց փնտրելու կարիք չկա պնդելու համար, որ Կյուրիոնը Դվինում չի եղել նաեւ ժողովից հետո: Այսպիսով, համոզված կարող ենք ասել, որ Դվինի Գ. ժողովը Կյուրիոնի հարցը չի քննել, նրա հարցը չի քննել նաեւ եպիսկոպոսների ատյանը ժողովից առաջ: Վերջինս չի քննել, քանզի ոչ միայն այլեւայլ նկատառումներով որոշվում է գործը հանձնել ապագա կաթողիկոսի դատին, այլ որովհետեւ իրավասու չէր պարզապես: Ատյանը քննում էր թեմական եպիսկոպոսների հարցը, իսկ Կյուրիոնը կաթողիկոս էր, եպիսկոպոսապետ: Նշանակում է՝ պետք է տեսնել, թե որքանով էր նա ենթակա Հայոց կաթողիկոսին: Սակայն դա պարզելու համար հարկ է պատասխանել մեկ ուրիշ հարցի. Հայոց եւ Վրաց եկեղեցիներն իսկապե՞ս մեկ էին, ամբողջական եւ ընդհանո՞ւր էր հոգեւոր կառույցը:

Բնավ հին վեճը նորացնելու ցանկություն չունենք, ոչ էլ նորանոր փաստեր բացահայտելու ակնկալություն: Ցանկացած բարեխիղճ ուսումնասիրող կարող է փասնյակ էջեր լրացնել պատմական այնպիսի վկայություններով, որոնք կհավաստեն մինչեւ Է. դարը Մեծ Հայքում եւ Քարթլիում գործող եկեղեցիների միասնական լինելու, պատրիարքական նույն աթոռին նրանց միասնաբար ենթարկվելու հանգամանքը: Միայն մեկ ապացույց բերենք: Պատմում է Ուիտպանես եպիսկոպոսը. «Այդ ժամանակներում վախճանուեց Վրաց կաթողիկոսը, եւ երկրի իշխաններն ու նախարարները Մովսէս կաթողիկոսի մօտ մարդիկ ուղարկեցին՝ եպիսկոպոսներով հանդերձ՝ խնդրելու իրենց համար առաջնորդ: Իսկ նա մտածեց, որ իր տանից տայ նրանց առաջնորդ... [ուստի]

22 Անդ, էջ154:

23 **Ուիտպանէս,** նշվ. աշխ., էջ 160: «Գիրք թղթոց»-ում (էջ 162) նամակը փոքր-ինչ այլ վերջավորություն ունի. «Մի՛ դանդաղիցիս ի սուրբ Զատիկն գալ այսր, զի բազմաց լինի խնդութիւն եւ գործք հոգեւորք առաջիկա՝ մինչդեռ Տէր Սմբատ ասպէն է, փութամք որով եւ է արիւնակաւ նախ զա՛ղ ի գլուխ տանել՝ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

24 Անդ, էջ 164: ԳԹ-, 166-167:

ձեռնադրեց Կյուրիոնին»[25]: Պատահական չէ, որ հեղագայում Մովսես կաթողիկոսին ուղղված իր առաջին պատասխան նամակը Կյուրիոնն այսպես է ավարտում. «Մենք ամեն ինչով հնազանդ ենք ձեզ եւ ձեր հրամաններին»[26]: Այսպիսով, անառարկելի է, որ մինչեւ Է. դարը հայերի եւ քարթվելների եկեղեցին նույնն էր:

Իսկ ի՞նչ անենք Վախթանգ Գորգասալի կողմից Վրաց եկեղեցին անկախացնելու մասին տարածված պատմությունը: Ոչինչ: Կարելի է ընդունել, որ փաստը համապատասխանում է իրականությանը, միայն դրա մեկնաբանությունն է սխալ: Վրաց եկեղեցու պատմության վրացի հետազոտողների (Մ. Սաբինին, Ի. Ջավախիշվիլի եւ այլք) համար այդ դրությունը կատարյալ ինքնավարություն էր եւ բացարձակ անկախություն: Իրականում դա ընդամենը ավտոնոմ, ոչ թե ավտոկեֆալ եկեղեցու կարգավիճակ էր: Այդ եկեղեցու պետը, որ իսկապես կաթողիկոս պատվանունն էր կրում, երկրամասի թեմերի եպիսկոպոսների գլուխն էր եւ նրանց վրա բավականին մեծ իրավունքներ ուներ (ընդհուպ մինչեւ նշանակելու եւ ազատելու), բայց ինքը, այնուամենայնիվ, ենթակա էր եւ նշանակվում էր Հայոց կաթողիկոսի կողմից: Դրասխանակերտցին ամենեւին Վրաց եկեղեցին ցածրացնելու համար չէր գրում, թե «Մովսեսը սուրբ կաթողիկեի վաներեց Կյուրիովնին իր նախորդների օրինակով ձեռնադրում է վրաց նահանգի, գուգարացիների եւ եգերացիների արքեպիսկոպոսության համար»[27]: Հայոց կաթողիկոսների կողմից քարթվելների կամ աղվանների համար հոգեւոր պետ նշանակելը բացառիկ կամ մասնավոր երեւույթ չէր: Դրանից առաջ տեսնում ենք, որ Դվինի Բ. ժողովին (554 թ.) ներկա է Ներսես Բ. կաթողիկոսի կողմից ձեռնադրված Աբդիշո եպիսկոպոսը, որը գլխավորում էր ասորի միաբնակների պատվիրակությունը[28]: Այսինքն՝ հատկապես հիշյալ դարերում եպիսկոպոսապետ-կաթողիկոս լինել՝ բոլորովին չէր նշանակում անկախ եկեղեցու պետ լինել:

Հիմա, ըստ այդմ, Կյուրիոնի ներկա գտնվելն իր անմիջական ղեկավար մարմնի ընդհանուր ժողովին պարտադի՞ր էր, թե՞ ցանկալի, նրա մասնակցությունը պիտի լիներ վճռակա՞ն, թե՞ խորհրդակցական ձայնով, իբրեւ թեմական առաջնո՞րդ, թե՞ իբրեւ հրավիրյալ: Ինչպես տեսանք, ժողովի կազմակերպիչները մասնակցության հրավեր չուղարկեցին Կյուրիոնին՝ ժողովն իր օրակարգում նրան վերաբերող հարց նույնիսկ չուներ: Մեզ հայտնի վճիռը կայացնողը նորընտիր կաթողիկոս Աբրահամն էր՝ ինքնակամ թե եպիսկոպոսական ատյանի հետ, այլ հարց է, բայց փաստ է, որ ժողովից հետո: Կրկին նույն հարցը. ի՞նչ իրավունքով: Այնուամենայնիվ, ո՞ր ատյանն էր իրավասու, ո՞վ եւ ե՞րբ քննեց Կյուրիոնի գործը, հետեւաբար եւ՝ Վրաց (Քարթլիի) եկեղեցու հարցը: Մահեն նման նախադեպերի կապակցությամբ տեսակետ է հայտնում, թե «գործող կաթողիկոսը ժողովի կողմից կարող է դատապարտվել միայն այն ժամանակ, երբ հրաժարվում է ներկայանալ»[29]: Խոսքը, իհարկե, միեւնույն հոգեւոր հոտի եւ նրա

25 **Ուխտանէս,** նշվ. աշխ., էջ 109:
26 Անդ, էջ 116:
27 **Հովհաննես Դրասխանակերտցի,** նշվ. աշխ., էջ 69:
28 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երեւան, 1984, էջ 252:
29 Անդ, էջ 57:

հովվապետի միջեւ ծագած հարցերին լուծում տալու եղանակներից մեկի մասին է, որը փվյալ դեպքում անտեղի է ճշտիվ նույնացնել Կյուրիոնի վիճակին: Եվ եթե փորձենք այս ընդհանուր բնույթի դիտողության օգնությամբ լուսաբանել նրա անվամբ նշանավորված դեպքերի վերջին դրվագները, առավել ևս՝ այդկերպ հակադրվել հայ պատմագրության մեջ վերջինիս կերպարի գոյություն ունեցող կարծրատիպը պահպանելու միտումին, ապա վստահաբար ոչնչով օգնած չենք լինի ժամանակաշրջանի իրական պատկերը բացահայտելուն: Բայցեւայնպես, Մահեի դիտողությունը կարեւոր է եւ հուշում է, թե ինչի վրա է անհրաժեշտ ուշադրություն դարձնել:

Մինչ այժմ դիտարկում էինք Հայ եւ Վրաց եկեղեցիների հիերարխիկ կապը: Պատկերը պարզ է. նրանք միեւնույն կառույցի բաղկացուցիչ մասերն էին եւ ունեին ուղղահայաց հարաբերություններ, ընդ որում՝ ավագը Հայոց եկեղեցին էր: Սակայն վերջին ժամանակներս գիտական շրջանառության մեջ են դրվել ձեւակերպումներ, որոնց հետ, մեղմ ասած, դժվար է համաձայնել: Խոսքը «Առաջինը հավասարների մեջ» սկզբունքի մասին է:

Իմիջիայլոց, այս չարչրկվող տեսությունն այնքան էլ նոր չէ. շուրջ 100 տարի առաջ, երբ դեռ մեծն Մառը կենդանի էր եւ իր ուսումնասիրություններում ու դասախոսություններում տարբեր առիթներով անդադրում կրկնում էր, թե «մենք ունենք հետքը առաջին հայ-վրացական եկեղեցու»[30], որը հայոց ավագությամբ էր՝ Ջավախիշվիլին տեսակետ է հրապարակ հանում, թե՝ Զ. դարի վերջին, այսինքն՝ նախքան այսպես կոչված բաժանումը, երկու կաթողիկոսները հավասար կարգավիճակ ունեին[31]: Վրաց պատմաբանի նպատակը հասկանալի էր. նա կամենում էր անհեթեթ դարձնել Աբրահամի շրջաբերականը եւ ցույց տալ հայոց եկեղեցապետերի սխալականությունը: Բայց անձնական ցանկությունը գիտական հիմնավորում չէ: Ցանկացած անաչառ պատմաբան գիտե, որ Անդրկովկասում քրիստոնեության առաջին երեք դարերի պատմությունը հարաբերությունների ուրիշ պատկեր ունի: Ցավոք, ոմանց կողմից համառորեն շարունակվում են անցյալը սրբագրելու եւ ներկային հարմարեցնելու ջանքերը: Ըստ այդմ՝ ոմանք վրացիների հետագա դարերի պատմական հաջողությունների փայլը փորձում են տարածել նաեւ Է. դարի վրա, կոկել ու սնգուրել Քարթլիի եկեղեցու տվյալ պահի կարգավիճակը: Այնինչ, կրկնենք, աներկբա ճշմարտությունն այն է, որ Է. դարում Վրաց եւ Աղվանից եկեղեցիները դեռեւս ուղղակիորեն ենթարկվում էին Հայաստանյայց եկեղեցուն: Անկասկած, նրանք չեն իրադարձությունների ժամանակակիցը, այլ Զ. դարի ասորի մատենագիր Զաքարիա Հռետորը, որն ընդգծում է Հայոց եկեղեցու գերագահությունը Վրաց եւ Աղվանից եկեղեցիների նկատմամբ[32]: Ահա, ուրեմն, Հայոց կաթողիկոս Աբրահամը ամենայն իրավունքով կարող

30 **Ն. Մառ**, Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց եւ Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, Վաղարշապատ, 1911, էջ 91:

31 **И. Джавахов**, История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, СПб, 1908, с. 447.

32 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հ. 8, **Զաքարիա Հռետոր**, Ժամանակագրություն, Երեւան, 1976, էջ 313:

էր պատիժ սահմանել իրեն ենթակա Վրաց կաթողիկոս Կյուրիոնի համար: Թեկուզ ավանդույթի ուժով:

Բայց դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ Աբրահամը չի շտապում պատժել Կյուրիոնին: Հապաղում է: Ինչո՞ւ: Այդ դեպքում՝ ո՞րն է պատմության կուլմինացիան եւ ո՞րը՝ հանգուցալուծումը: Արտաքուստ զագաթնակետ է երեւում ժողովից հետո դեռեւս շարունակվող նամակագրության կոպիտ դադարեցումը Կյուրիոնի կողմից, իսկ լուծումը՝ Աբրահամի շրջաբերականը: Իսկապես այդպես է. երկու կաթողիկոսների կատաբած այդ անհնախաղեպ քայլերը հետագայում համարվում են փոխադարձ հրաժարումը խորհրդանշող գործողություններ: Բնականաբար, պիտի անդրադառնանք դրանց, մինչ այդ, սակայն, ուշադրություն դարձնենք հետեւյալի վրա: Սյուժետային բավականին կարեւոր երկու զարգացում կա, որոնցից մեկը կարող ենք կուլմինացիան նախապատրաստող պատճառ համարել, իսկ մյուսը՝ կուլմինացիայի հետեւանք, որը նախորդում է հանգուցալուծմանը՝ պատմության ավարտին: Առաջինը Կյուրիոն եւ Մովսես Յուրտավեցի հակամարտությունն է, երկրորդը՝ Կյուրիոնի խոռվելը Հայաստանյայց եկեղեցու նոր հիերարխիայում իր աթոռը Աղվանից կաթողիկոսի աթոռից բարձր չդասելու պատճառով (չնայած հայ մատենագիրները հենց սա են համարում գլխավոր առիթներից մեկը): Ցանկացած ուսումնասիրություն թերի կլինի, եթե անտեսվի այս երկու հարցը:

Այսպիսով՝ Կյուրիոն եւ Մովսես Յուրտավեցի հակամարտություն: Կյուրիոնը մեզ արդեն բավականաչափ ծանոթ է, հետեւաբար ներկայացնենք Մովսես Յուրտավեցուն, քանի որ նա է նոր գործող անձը: Այս Մովսեսը Գուգարքի բդեշխանիստ Յուրտավ գյուղաքաղաքի եպիսկոպոսն էր եւ իր պաշտոնն ստանձնելու պահին ընդամենը երեսուն տարեկան էր[33]: Լեոն գրում է, որ Մովսեսը «Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ էր սահմանագլխի այս շատ կարեւոր կետում»[34], անշուշտ, ելնելով Ուխտանեսի հետեւյալ տողերից. «Ինքը (Մովսեսը.- Հ.Դ.) միջնորդ ու սիրոյ շաղկապ էր երկու կողմերի՝ հայերի ու վրացիների միջեւ: [...] Եւ [նա] դարձաւ երկու ազգերի՝ հայերի ու վրացիների միջեւ հաւատի հաստատութեան միջնորդ մինչեւ Գիւրիոնի դաւանափոխութեան ժամանակները»[35]: Սակայն տեսնում ենք, որ այդ «միջնորդությունը» շատ արագ վերածվում է Մովսես-Կյուրիոն անձնական թշնամանքի, ապաեւ՝ միջեկեղեցական լուրջ ընդհարման: Նա էր, որ բացահայտել էր ճշմարիտ հավատից Կյուրիոնի խոտորվելը եւ ժամանակին ահազանգել Մովսես կաթողիկոսին, հետագայում նույնի մասին չզլանալով հայտնել նաեւ Աբրահամ կաթողիկոսին[36]:

Նամակից նամակ երեւում է, թե ինչպես է լարվածությունը մեծանում, եւ ամեն ինչում ու ամեն տեղ երեւում է Մովսես եպիսկոպոսը: Գալիս է մի պահ, երբ երկու եկեղեցիների բաման կենտրոնում հառնում է միայն նրա կերպարանքը: Նա դառնում է պայ-

33 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 111:
34 **Լեո**, նշվ. աշխ, էջ 230:
35 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 119, 133:
36 Անդ, էջ 110, 161:

քարի մարմնացում, ամեն ինչ պտտվում է նրա անվան շուրջը: Ուիսպանեսը պատմում է, թե ինչպես «երանելի եպիսկոպոսը բարեյաջող վարեց մարտը՝ բազմաթիւ խօսքերով յանդիմանելով նրան (Գիւրիոնին.- Հ.Դ.), բայց ոչ մի օգուտ չարեց... Գիւրիոնին մէկ անգամ, երկիցս եւ երիցս յանդիմանեց առանձին եւ վկաների ներկայութեամբ եւ եկեղեցու մէջ՝ ըստ աւետարանական խօսքի»[37]: Ապա նրան տեսնում ենք հենց այդ պատճառով Կյուրիոնից հալածված՝ պաշտոնանկ արված ու փախուստի մեջ գտնվելիս, բայց կրկին առլեցուն մարտաշունչ ոգով: Նա Կյուրիոնի գործերի քննիչն է[38], այնուհետեւ բառացիորեն ցուցումներ է տալիս Վրթանես տեղապահին, Սմբատ իշխանին, Աբրահամ կաթողիկոսին, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկեն վերջինիս դեմ, հետո «շրջաբերական նամակ է գրում Ցուրտաւ քաղաքի եւ նրա նահանգի իր թեմականներին, որ զգուշանան Քաղկեդոնի աղանդից ու նրանց նմաններից»[39], բացատրում ու միեւնույն ժամանակ արդարանում է, թե ինչու է հալածական դարձել եւ այլն:

Անշուշտ չափազանցում կլինի, եթե առիթը Մովսեսին համարենք, որ հայերը «Կյուրիոնին հեռացրին իրենցից եւ նրա բաժինը կեղծաւորների շարքում դրեցին»[40], սակայն կսխալվենք նաեւ, եթե անտեսենք փաստը, որ Վրթանես տեղապահը Կյուրիոնին հորդորում է ու սպառնում, թե «պատճառ եղիր, որպէսզի սուրը կորչի, իսկ ճշմարտութիւնը հաստատուի, եւ եպիսկոպոսն (Մովսեսը.- Հ.Դ.) իր տեղը վերադառնայ: Քանզի եթէ այդ այդպէս չլինի, յաւիտենական թշնամի կը մնանք քո երկրի նկատմամբ»[41], կամ Աբրահամ կաթողիկոսը շրջաբերականով Կյուրիոնին նզովելիս չի մոռանում շեշտել, թե ինչպես սա «Ցուրտաւի եկեղեցու եպիսկոպոսին... ուղղափառ հաւատի պատճառով հալածական արեց»[42]: Ինչպես տեսնում ենք, Մովսեսը, իրոք, երկրորդական դեմք չէ, բայցեւ դժվար է ասել, թե գլխավոր գործող անձերից է:

Մեր պարտավորությունն է անդրադառնալ նաեւ այուժեի երկրորդ գծին, որը, ինչպես նշել ենք, կարող ենք համարել Դավինի ժողովի ընդունած եկեղեցական ասպիճանների նոր դասակարգությունը: Համենայն դեպս, Ուիսպանեսը դա է ընդունում վրաց բաժանման երկրորդ պատճառ: Նա իր խոսքը հավաստի դարձնելու համար օգտվում է «այլ պատմագիրների շարադրանքից»[43], տվյալ դեպքում՝ Մովսես Կաղանկատվացու երկից: Իսկ Կաղանկատվացին գրում է. «Ինը դասակարգության պատճառով եկեղեցական գլխավորները քմահաճ կերպով ըստ իրենց գոռոզ բնավորության Աբրահամին պատրիարք են կարգում հայերին, Աղվանքի համար արքեպիսկոպոս են դնում, իսկ վրացիների համար՝ մետրոպոլիտ: Վրաց մետրոպոլիտը, որի անունն էր Կյուրիոն, չենթարկվեց եւ վճռեց հակառակվել, իսկ Աբրահամ հայրապետը ասում էր, որ Աղվանքը վրացիներից ավելի առաջ է հավատացյալ դարձել, նրանց հասնում է եպիսկոպոսապե-

37 Անդ, էջ 121, 135:
38 Անդ, էջ 169:
39 Անդ, էջ 126:
40 Անդ, էջ 198:
41 Անդ, էջ 140:
42 Անդ, էջ 209: ԳԹ-, էջ 194:
43 **Ուիսպանէս**, նշվ. աշխ., էջ 195:

տություն: Այս վիճաբանությունից ելնելով վրացիները դիմեցին ուղղափառ հավատին եւ դարձան քաղկեդոնականներ»[44]: Քանի որ մեզ համար նույնպես անվիճելի է «Գիրք թղթոցում» ժողովված նյութերի հավաստիությունը, ապա, եթե հիշենք այն նամակը, որ Կյուրիոնը գրել է ի պատասխան Աբրահամին՝ «խոնարհ երկրպագութիւն եւ սիրով ողջոյն» հղելով ու ներողամտություն հայցելով, որ չի կարողացել գալ եւ անձամբ շնորհավորել նրան «երանելի սուրբ Գրիգորի աթոռը ժառանգելու»[45] առիթով՝ չենք ասի, թե նա ժողովից հեռո խռոված էր ու թշնամացած: Այն էլ՝ նախաթոռության հարցով, այն էլ՝ ոչ թե Հայոց աթոռի գերագահությունը, այլ նույն նվիրապետական կառույցում Վրաց եւ Աղվանից աթոռների առաջնությունը վիճարկելով:

Շինծու, արհեստական բաներ կան այս հորինվածքում: Նախ, որ Դվինի ժողովի հիրավի պատմական որոշումը դրանով պարզունակացվում, իջեցվում է կենցաղային մակարդակի, եւ այդ ֆոնի վրա Կյուրիոնին վիրավորվածի դեր է հատկացվում: Այնուհետեւ՝ իրական շարժառիթների փոխարեն կեղծ զրույցներ են բերվում, որոնց հիման վրա մինչ հիմա բոլորովին սխալ մեկնաբանություններ են կատարվում, պատմականությունից զուրկ եզրակացություններ արվում: Այս առումով հարկ է կարեւոր մի ուղղում կատարել. Կյուրիոնը ոչ թե ընդունել է Դվինի Գ. ժողովի որոշումները Հայաստանյայց կաթողիկոսությունը VI Տիեզերական աթոռ հռչակելու եւ նվիրապետական ինը դասեր հաստատելու վերաբերյալ, բայց չի համաձայնել իրեն մետրոպոլիտ, իսկ Աղվանից կաթողիկոսին արքեպիսկոպոս կարգելու հարցում՝ նեղացել ու բաժանել է Վրաց եկեղեցին, այլ՝ սկզբնապես եւ սկզբունքորեն չի ճանաչել հիշյալ որոշումներն ու հենց այդ պատճառով է մերժել Դվինի գերագահությունը: Այս դիտողությունը եւս գալիս է հաստատելու, որ հիմնովին սխալ է պնդելը, թե՝ ժողովը պատժական որոշում է կայացրել Կյուրիոնի ու Վրաց եկեղեցու վերաբերյալ:

Այդ պնդումը նոր չէ: Եպիսկոպոսական ժողովի կողմից շրջաբերական նամակ գրելու որոշում ընդունելու մասին զրույցը շուրջ հազար տարվա վաղեմություն ունի, ինչն էլ թերեւս դրա հավաստիությունը պայմանավորող հանգամանքներից մեկն է: Բանն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցին եւ Ստեփանոս Օրբելյանը՝ նման հատվածներ ունեն[46]:

Իսկ ինչո՞ւ են Դրասխանակերտցին եւ հաջորդող պատմագիրները Կյուրիոնի մասին որոշումը վերագրում ժողովին: Դրանով նրանք շրջաբերականը հատուկ կարեւորո՞ւմ են, թե՞ այլ նպատակ են հետապնդում: Ամենայն հավանականությամբ, հեղինակային այս հավելումները ծնվել են զուտ նրա համար, որպեսզի տրամաբանական որեւէ բացատրություն տրվի կատարվածին: Համենայն դեպս, սկզբնաղբյուր հանդիսացող «Գիրք թղթոց»-ում, ինչպես նաեւ Ուիտրանեսի երկում ոչ մի հիշատակություն չկա այդ առիթով Դվինում գումարված ժողովի մասին: Շրջաբերականը դատավճիռ է, բայց ոչ դատական ընթացքի ավարտ: Դատավճիռ՝ առանց դատական քննության: Իսկ քանի

44 **Մովսես Կաղանկատվացի,** նշվ. աշխ., էջ 213:

45 **Ուիտրանէս**, նշվ. աշխ., էջ 164: ԳԹ, էջ 166:

46 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 75: **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 357:

որ առ այսօր հարց է մնում, թե ով է բաժանումի վերջին ու վճռական քայլը կատարել, ապա պատմաբանները փորձում են համոզել, որ «նմանօրինակ հույժ կարեւոր խնդիրը կարող էր լուծվել ժողովական մակարդակով»[47] միայն, իսկ Վրաց Եկեղեցու պատմությամբ զբաղվողները վստահեցնում են, որ քաղկեդոնական հավատքի վրա Կյուրիոն կաթողիկոսի հաստատակամ մնալու պատճառով երկու հոգեւոր պետերի միջեւ ընթացող նամակագրության դադարեցումը բավական էր, որպեսզի իզվեր միջեկեղեցական առանց այդ էլ զուտ ձեւական կապը[48]: Սրանք երկուսն էլ թանձրացումներ են, որովհետեւ, ինչպես տեսանք, ոչ ժողովն է խնդրո վերաբերյալ վճիռ կայացրել, ոչ էլ՝ նամակագրության ընդհատումն էր մի երեւելի պատճառ, որպեսզի միասնական եկեղեցին երկու մասի բաժանվեր:

Ըստ էության, այս շրջաբերական նամակը սոսկ տեղեկատվական եւ նախազգուշական բնույթ ունի, եւ նրան այլ գործառույթներ վերագրելը ճիշտ չէ: Համոզվելու համար Ուխտանեսի երկից[49] դրա ամենահիմնական հատվածները բառացի մեջբերենք: Մինչ այդ, սակայն, առաջին բաժինը ներկայացնենք Օրմանյանի օգնությամբ, ըստ որի՝ շրջաբերականը «նախ կը յայտնէ հաւատոյ ուղղութեան պաշտպանելու պարտաւորութիւնը, կը յիշէ երեք ժողովները, յառաջ կը բերէ ուղղափառ հանգանակը, կը բացատրէ Քաղկեդոնի ժողովին անտեղի որոշումը, որ մինչեւ Վրաց եւ Աղուանից կողմերը տարածուեցաւ, կը պատմէ Կիւրիոնի ընթացքը»[50]: Այժմ տեսնենք, թե Աբրահամ Կաթողիկոսն ինչ է ասում վրացիների համար: «Նախկինում,- հայտնում է նա,- հոռոմների վրայ մեր վարդապետների դրած բանադրանքը, որը կը մնայ մինչեւ վերջ, եթէ չդառնան ճշմարիտ [հաւատին], մենք նոյնը վրացիների վրայ հրամայեցինք [դնել, եւ ըստ այնմ]՝ ամենեւին չհաղորդակցուել նրանց հետ ո՛չ աղօթքով, ո՛չ կերակուրներով, ո՛չ ըմպելիքներով, ո՛չ բարեկամութեամբ, ո՛չ դայեակութեամբ, չգնա՛լ Խաչը (Մցիխեթի Ս. Խաչ.- Հ.Դ.) աղօթելու, եւ ո՛չ էլ նրանց մեր եկեղեցիներում ընդունել, նաեւ ամուսնանալուց ամենեւին հեռու մնա՛լ, այլ միայն որեւէ բան գնել կամ գնով [կալ, ինչպէս հրէաներին]»[51]:

Այսքանն է վրացիների մասին: Մեծ աղմուկը սրա համար է: Բայց ի՞նչ է պատահել՝ վրացիների հասցեին չոր խո՞սք է ասվել: Ինչո՞ւ է մոռացվում, որ վաղուց միջեկեղեցական քարոզչական (համարենք այդպես) պայքար էր ընթանում, եւ քարթվելներն իրենց մասնակցությամբ առանձին ճակատ էին բացել, հետեւաբար նրանք պիտի ընդունեին պայքարի բոլոր կանոնները (պարզապես դրանք կոչվում էին եկեղեցական կանոններ): Այդ կանոնների համաձայն հակառակորդը պետք է նախ մեղադրվեր ու դատապարտվեր: Բարսեղ Մեծին վերագրվող կանոնները ներառված են Հայոց Կանոնագրքում: Նրա առաջին կանոնը հետեւյալն է. «Հները հերետիկոս համարում էին

47 **Վ. Վարդանյան**, Դվինի 607 թվականի ժողովի շուրջ, էջ 74:

48 **И. Джавахов**, նշվ. աշխ., էջ 536:

49 Կաղանկատվացու բերած շրջաբերականի շարադրանքը փոքր-ինչ տարբեր է: Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 210:

50 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., էջ 743:

51 **Ուխտանէս**, էջ 209: ԳԹ, էջ 194:

ուղիղ հաւատից բոլորովին հեռացածներին: Հերձուածող համարում էին զանազան հարցերում տարբեր կարծիք ունեցողներին. իսկ ինքնագլուխ ժողովարան կազմողներն էին ապստամբ հոգեւորականներ եւ ժողովրդականք, որոնք պառակտում էին մի որեւէ եպիսկոպոսի հօտը: Աղանդաւորների կամ հերետիկոսների մկրտութիւնը չի ընդունում, իսկ հերձուածողներինը եթէ կզոջան, ընդունում է, նոյնպէս եւ ձեռնադրութիւնը»[52]:

Ինչ վերաբերում է Աբրահամի նշած «հոռոմների վրայ մեր վարդապետների դրած բանադրանքին», ապա նման բան ոչ մի տեղ չի երեւում: Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի պրպտումները հանգեցրել են այն եզրակացության, որ Դվինի Գ. ժողովը եկեղեցական կանոններ չի սահմանել[53]: «Դժուար է դրական կերպով պնդել,- գրում է Մելիք-Թանգյանը,- որ այս ժողովը որոշել է դաւանաբանական հարցեր, եթէ դաւանաբանական խնդիրների մասին կանոններ են սահմանել, ինչո՞ւ չեն մտել մեր կանոնագրքերը նոյն ժողովի սահմանադրութիւնների մէջ: [...] Մովսէս կաթուղիկոսի մեռնելուց յետոյ, երբ ժողով է լինում կաթուղիկոս ընտրելու, Սմբատ Վրկան մարզպան «հաւատոյ ձեռնարկ» է խնդրում ժողովից: Ահա այդ ձեռնարկի մէջ ոչ մի խօսք չէ յիշւում Ներսէս Բ.-ի մտցրած դաւանաբանական կէտերի մասին»[54]: Ավելացնենք, որ ձեռնարկում նշվում է, իհարկե, ի թիվս հերձվածողների Քաղկեդոնի ժողովը եւ Լեւոնի տոմարը[55], սակայն ձեռնարկը կանոն չէ: Թերեւս վարդապետների բանադրանքը պետք է այդօրինակ պայմանավորվածությունները համարել: Ի դեպ, այս հանգամանքը եւս անուղղակիորեն ապացուցում է, որ Գ. ժողովում Կյուրիոնի հարցը չի քննարկվել:

Օրմանյանը առաջին հայացքից մի տարօրինակ հայտարարություն է անում. «Հայ Եկեղեցին երբեք յաւակնութիւն չէ ունեցած՝ իւր որոշումներուն դաւանական հաւատալիքի ոյժը տալ, եւ ոչ ալ իբր հերետիկոսներ եւ հերձուածողներ դատապարտած է այն եկեղեցիները՝ որ իրեն ընդունած վարդապետութեան չեն համակերպիր: Ամէն վարդապետական կէտեր, որոնք բաժանման գիծ մը կը գծեն Հայ Եկեղեցւոյ եւ ուրիշ եկեղեցիներու մէջտեղ, մեր յայտարարութիւնը հաւաստելու միմի փաստեր են, քանի որ երբեք ուրիշ եկեղեցիներու վրայ բռնանալու կամ յաւակնելու կերպեր գործածուած չեն»[56]:

Օրմանյանը պարզապես ուրիշ միտք է արթնացնում, ակամայից մեր տրամաբանական եզրահանգումն է հաստատում, այն, որ Աբրահամը Կյուրիոնին եւ Վրաց եկեղեցուն չի պատժել: Նա ընդամենը բնորոշումներ է տվել Կյուրիոնին ու Վրաց եկեղեցուն: Իսկ քանի որ գնահատական տալը, ինքնըստինքյան հասկանալի է, չի նշանակում պատիժ սահմանել, առավել եւս՝ պատիժ կիրառել, ապա հարց է առաջանում՝ իսկ ինչո՞վ է արդարացված այն մեծ աղմուկը, որ գոյություն ունի հիշյալ փաստաթղթի շուրջ: Իրականում՝ ոչնչով, որովհետեւ սույն շրջաբերականը, ըստ էության, հավանա-

52 **Ն. Մելիք-Թանգեան,** նշվ. աշխ., էջ 237: Նույնի գրաբարը տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 334: Համանման բովանդակություն ունի նաեւ Կոստանդնուպոլսի Բ. ժողովի վեցերորդ հոդվածը, տե՛ս Ն. **Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 170:

53 Տե՛ս **Ն. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 390:

54 Նույն տեղում, էջ 367:

55 **Ուխտանէս,** էջ 150

56 **Մ. Օրմանեան,** Հայոց եկեղեցին, Երեւան, 1993, էջ 134:

կան վտանգից հոգեւոր հոտը պաշտպանելուն միտված կանխարգելիչ միջոց էր, ինչպես նաեւ՝ լիովին համահունչ էր եկեղեցական կանոնների տառին ու ոգուն: Պարզապես հարկ է հիշել՝ ինչ է գրված խուժիկ նեստորականների վերաբերյալ Ներսես Բ.-ի նախաձեռնությամբ կազմած թղթում. «Եւ սահմանեցաք ըստ հրամանի սուրբ առաքելոցն, եւ երանելի ուղղափառ վարդապետաց, ամենեւիմբ մի՛ վիճել ընդ նոսա հակառակաբանութեամբ, այդ՝ հեռանալ ի նոցանեն՝ արդարեւ որպէս ի թշնամեաց Քրիստոսի Աստուծոյ»[57]: Աբրահամը նույն բանն է հրահանգում իր հոտին: Այլ հարց է, թե դա ինչ չափով պիտի կիրառվեր:

Շրջաբերականի հետեւանքների մասին: Ակինյանը գրում է. «Ի՞նչ գործնական ազդեցութիւն ունեցաւ Աբրահամու Շրջաբերականը հայ ժողովրդեան վրայ. պատճառե՞ց որ եւ իցէ յուզում, ապելութիւն դեպի վրացիները, եւ տրուած հրահանգներու համաձայն ընթացա՞ն Հայք այնուհետեւ, թէ ամէն հրահանգ եւ սպառնալիք անարժէք, լոկ թղթի վրայ մնացին: Ի ցաւ, չունինք այս նկատմամբ որ եւ իցէ յիշատակարան կամ ակնարկութիւն ժամանակակից անձէ մը: [...] Չազդուեցաւ նաեւ Կիւրիոն. թէպէտ կը պակսի մասնաւոր տեղեկութիւն Կիւրիոնի բռնած ընթացքի մասին, սակայն ամէն պարագայք այսպէս կարծել կու տան»[58]: Լեոն գրում է. «Երկար ժամանակ, նույնիսկ մինչեւ 12-րդ դարի սկիզբը, Աբրահամ կաթողիկոսի արգելքներն իրական մեծ արժեք չունեին հայ-վրացական փոխհարաբերությունների մեջ: Եկեղեցական կատարյալ համաձայնության եւ դավանակցության կապերը շարունակեցին գոյություն պահպանել եւ Աբրահամ-Կյուրիոնի ժամանակներից հետո»[59]:

Ինչպես տեսնում ենք, հայ ուսումնասիրողների ենթադրություններում անթաքույց ափսոսանքն է զերիշխում:

Ստիպված ենք որերորդ անգամ ուշադրություն հրավիրել մի պարզագույն հարցի վրա. որեւէ իրավական ուժ չունեցող դիրեկտիվային գրությունն ինչպե՞ս կարող է կողմերից մեկի համար հաղթանակ, մյուսի համար պարտություն նշանակել: Իհարկե չի կարող: Վերջնականորեն համոզվելու համար հիշենք պարզապես հոդվածի սկզբում մեր կատարած մի կարեւոր ճշգրտում: Այն է՝ եկեղեցիների բաժանումը կամ պառակտումը արձանագրվում է եկեղեցական ժողովներում եւ հաստատվում դրանց ընդունած որոշումներով: Եթե ժողովի վավերացում չի կատարվում, ապա ցանկացած պահի հնարավոր է բաժանումն անջատողականություն համարել: Իսկ Դվինի ժողովականները, ինչպես տեսանք, իսկապես քարթվելների վերաբերյալ ոչ մի որոշում չեն ընդունում...

Պատմության մեջ դեպքեր ու տարեթվեր կան, որոնք ամրակայված են, շարժել չի կարելի, կարելի է միայն պտտվել դրանց շուրջը: Այդպիսին է 609 թվականը, այդպիսին է Աբրահամի շրջաբերականը: Այդպես են ասում պատմագիրները, այդպես են ասում պատմաբանները: Գուցե նրա համար են պարտվում, որ դրանից հարցեր քիչ են ծագում ու այսօրվա համար լույսի պես ամեն ինչը հստա՞կ է թվում: Այդ դեպքում ինչո՞ւ են հա-

57 «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի», ԳԹ, էջ 74:

58 **Ն. Ակինեան**, Կիւրիոն՝ կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 256-257:

59 **Լեո**, նշվ. աշխ., էջ 232:

ջորդ իրադարձություններն այդքան աղոտ ու անորոշ: Շրջաբերականից հետո ի՞նչ էր անում Հայաստանյայց եկեղեցին: Ինչո՞ւ Վրաց Ուղղափառ Եկեղեցին Ը. դարում ինքնակա (ավտոկեֆալ) կարգավիճակ ստացավ[60], որը վերջնականաջես հաստատվեց ԺԱ. դարում միայն[61]: Ի՞նչն է նշանակալի Վրաց Եկեղեցու համար՝ Աբրահամի շրջաբերակա՞նը, թե՞ ինքնավարության հասնելը: Ի՞նչ է կատարվել պատմական այս երկու հանգրվանների միջև: Կա՞ն այնտեղ ուշադրության արժանի ելեւէջներ: Անշուշտ, կան:

613/5 թվական, Պարսից ժողով: Մի՞ակ աղբյուրը Սեբեոսն է[62], որի հաղորդումը սակայն միանգամայն բավարար է ժողովի մթնոլորտն զգալու համար: Նա վավերագրում է. «Խոսրով Որմիզդին Երուսաղեմի գերությունից հետո դարձյալ հրաման տվեց Արեւելքի եւ Ասորեստանի կողմերի եպիսկոպոսներին հավաքվել արքունի դուռը եւ ասաց. «Լսում եմ, թե քրիստոնյաները բաժանվել են երկու մասի, եւ մեկը մյուսին նզովում է, քանի որ [մեկը մյուսին] իրավացի չի համարում: Արդ՝ թող միաբանությամբ ժողովվեն արքունի դուռը, որպեսզի ուղիղը հաստատեն եւ թյուրը ի բաց մերժեն»: Եվ ժողովվեցին այն կողմերի բոլոր եպիսկոպոսները, երեցներն ու ողջ հավատացյալները. նրանց վրա ոստիկաններ (իմա՛ պատասխանատու, լիազոր.- Հ.Դ.) կարգեց Խոսրով Շում կոչվող Սմբատ Բագրատունուն եւ արքունի բժշկապետին: [...] Հայոց աշխարհից այնտեղ էին գտնվում երկու եպիսկոպոս այրեր՝ հավատարիմ մարդիկ՝ Մամիկոնեից եպիսկոպոս Կոմիտասը եւ Ամատունյաց Մատթեոսը»[63]: Ուշադրություն դարձնենք հետեւյալ հանգամանքի վրա. վրացիները հրավիրված չէին, քանզի առանձին եկեղեցի չէին ճանաչվում՝ ոչ հին թագավորների գիր ու կնիք ունեին, ոչ էլ անգամ խառնիճաղանջ աղանդ էին համարվում:

Այժմ Լեոյի օգնությամբ հետեւենք ժողովի ընթացքին. «Երուսաղեմի նվաճումն առիթ դարձավ, որ Խոսրով Պարվեզը նույնպես խառնվի քրիստոնյաների դավանաբանական վեճերի մեջ: Արեւելքի մեծ բռնակալները միշտ իրենց տարօրինակություններն են ունեցել: Բայց Խոսրովին այստեղ կարող էր ղեկավարած լինել եւ պետական անհրաժեշտականությունը: [...] Միանման դավանական ձեւ ընդունելու եւ այդպիսով բոլոր քրիստոնյա հպատակներին իրապես միացնելու համար նա 615 կամ 616 թվին Տիզբոնի իր պալատում գումարում է ժողով քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչներից, որոնց մեջ էր եւ Երուսաղեմի գերի Զաքարիա պատրիարքը: [...] Այս կրոնական ժողովին առաջարկված էր քննել, թե քրիստոնեական դավանանքներից որն է ամենառուղիղ, որպեսզի այն էլ ընդունվի արքունի հրամանով պարսկական պետության բոլոր քրիստոնյա համայնքների մեջ: [...] Եվ ժողովը [...] հայտարարեց, թե միակ ուղղափառ դավանությունը հայոց դավանությունն է, որ եւ պիտի ընդունվի ամենքի կողմից»[64]:

---

60 Грузинская Православная Церковь, Вопрос об автокефалии, http://Georgia.ortodoxy.ru

61 **К. Цинцадзе**, Историческая справка по вопросу об автокефальности Грузинской Церкви, Тифлис, 1906, с. 91-93. Նույն հեղինակի՝ Автокефалия Церкви Грузинской: исторический очерк IV-XI в., Тифлис, 1905, с. 30-31.

62 Ժողովը հիշատակող մյուս մատենագիրը Ասողիկն է, բայց նա Ժ.-ԺԱ. դդ. հեղինակ է:

63 **Սեբեոս**, նշվ. աշխ., էջ 231:

64 **Լեո**, նշվ. աշխ, էջ 242-243:

Պատահականություն չէ, որ ժողովում կրկին գլխավոր գործող անձը Սմբատ Բագրատունի իշխանն է: Խոսքովը նրան է նշանակում ժողովի կազմակերպիչ եւ վերակացու: Սմբատն ինքն էլ էր դա կամենում՝ ցանկանալով ավարտին հասցնել Դվինի ժողովում սկիզբ դրած գործը:

Լեոն այդ մասին ակնարկում է. «Եւ անշուշտ Սմբատ Վրկան մարզպանն էլ այս ժողովով կարծում էր նորից վերականգնած լինել մասնավորապես Հայոց եկեղեցու գերիշխանությունը Վրաստանում»[65]: Սա պատմական ճշմարտություն է, որը հարկ է վերստին հաստատել պատմագրության մեջ: Դրանից շատ բան կփոխվի: Նախ՝ Հայաստանյան եկեղեցուց Քարթլիի եկեղեցու բաժանման ժամանակը կճշտվի՝ չի կապվի Աբրահամի շրջաբերական նամակի հետ, ապա դրանից արտածվող հարցերի մի ամբողջ փունջ կհստակեցվի:

Օրմանյանը գրում է՝ «Պարսից ժողովին նպատակն է Պարսկաստանի քրիստոնեաներուն մէջ տիրող երկպառակութիւնը վերջացնել եւ երկրին խաղաղութեան նպաստել»[66]: Խոսքովը որոշեց դա իրականացնել Հայաստանյայց եկեղեցու գահերեցությունն ամբողջ Արեւելքում հաստատելու միջոցով: Դրանից հետո Հայոց կաթողիկոսը սկսեց մինչեւ անգամ նաեւ անվանվել Անտիոքի պատրիարք[67]:

Ամփոփենք: Այն, ինչը գեղեցկազարդած է, այլեւս պատմություն չէ՝ ավանդազրույց է: Ըստ այսմ՝ հիմնազուրկ են բոլոր այն հիշատակությունները, որոնցում Հայաստանյայց եւ Քարթլիի (Վրաց) եկեղեցիները պառակտվում են, իսկ Կյուրիոնը նզովվում է, քանզի հալածել էր Մովսես Յուրտավեցուն, Յուրտավի եկեղեցու պաշտոնը դարձրել էր երկլեզվյա, Աբրահամ կաթողիկոսին ճաշի ժամանակ վիրավորել էր, չէր ընդունել Դվինի ժողովի հաստատած նվիրապետական ինը դասի համաձայն իրեն տրված մետրոպոլիտության աստիճանը: Սրանք բոլորը պատմական ճշմարտությունից հեռու զրույցներ են, իսկ իրողությունն այն է միայն, որ նա սկզբունքորեն մերժել էր Հայաստանյայց եկեղեցին Տիեզերական աթոռ հռչակելու ակտը:

Ուսումնասիրություններում եւ անդրադարձներում շրջադարձային է համարվում Դվինի Գ. ժողովը, այնինչ՝ այս ժողովը ոչ մի կապ չունի տեղի ունեցածի հետ, որովհետեւ ոչ միայն օրակարգում նույն հավատքից շեղված Վրաց եկեղեցու կամ նրա հոգեւոր պետ Կյուրիոն կաթողիկոսի վարքի վերաբերյալ որեւէ հարց չուներ, այլեւ նույնիսկ օրակարգից դուրս, բայց ժողովականներով, չեն քննարկվել նման հարցեր: Վրաց եկեղեցին պաշտոնապես չի մասնակցել ժողովին, իսկ նրա հովվապետը՝ Կյուրիոն կաթողիկոսը չի հրավիրվել: Պատճառն այն է, որ ժողովի կազմակերպիչները, հատկապես Սմբատ Բագրատունի իշխանը եւ կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերթողը, Կյուրիոնի դեպքը համարելով կարգապահական, նրա հարցը թողել էին նորընտիր կաթողիկոսի հայեցողությանը:

Այնուամենայնիվ, հայ մատենագիրները՝ սկսած Հովհաննես Դրասխանակերտ-

65 **Լեո**, նշվ. աշխ, էջ 243:
66 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., էջ 760:
67 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», էջ 67:

ցուց, գրում են, որ Դվինի ժողովը քննել եւ որոշում է կայացրել խնդրո վերաբերյալ: Նույն կարծիքը ամենապարածվածն է նաեւ վերջին շրջանի պատմագրության մեջ[68]: Նկատենք, որ ժողովն իսկապես իրավասու էր դատական վճիռ կայացնելու, որովհետեւ Վրաց եկեղեցին «ի հոգեւորս» ենթարկվում էր Հայոց եկեղեցուն: Սա շատ կարեւոր պայման է եւ արժանի է հատուկ ուշադրության: Բանն այն է, որ վերջին շրջանում հայ պատմաբանների մեջ նույնպես արմատավորվում է գիտական եւ պատմական հիմքերից զուրկ մի տեսակետ, ըստ որի՝ երկու եկեղեցիների հարաբերություններում Հայոց Եկեղեցու ավագությունը պայմանավորված էր «Առաջինն ի հաւասարաց» սկզբունքով: Կարծում ենք՝ հարկ է տարբերակել երկու սկզբունքները, քանզի դրանք բոլորովին տարբեր գաղափարներ են խորհրդանշում, այն է՝ ինքնակայություն եւ ինքնավարություն: «Ի հոգեւորս գերագահությունը» թելադրում է մի դրություն, որտեղ գլխավորը, տվյալ դեպքում՝ Հայոց եկեղեցին, կոնկրետ իրավունքներով է օժտված, իսկ «առաջինը հավասարների մեջ» սկզբունքը ենթադրում է մի կարգավիճակ, որի դեպքում գլխավորին, տվյալ դեպքում՝ Հայոց եկեղեցուն, սոսկ պատվանուն է տրվում՝ առանց ինչ-ինչ իրավասությունների: Այս ինքնաշեն դարձվածքը գալիս է Ջավախիշվիլուց, որը հեղինակն է Հայոց եւ Վրաց կաթողիկոսների նվիրապետական աստիճանով իրավահավասար լինելու այժմ արդեն գործածական թեզի: Բայց նման բան անհնար էր թեկուզ այն պարզ պատճառով, որ Վրաց կաթողիկոսին ձեռնադրում էր Հայոց կաթողիկոսը, իսկ Հայոց կաթողիկոսին այդ իրավունքը տվել էր Անտիոքի պատրիարքը[69]: Է. դարի սկզբին դեռեւս գոյություն ուներ սույն հիերարխիան, ասել է թե՝ Դվինի Գ. ժողովը բացարձակ իրավունք ուներ քննելու վրացիների հարցերը, սակայն դա տեղի չունեցավ: Ժողովից հետո Աբրահամ Ա. կաթողիկոսը շրջաբերական նամակ է գրում «Հայոց ամբողջ աշխարհին»[70], որով իր հոգեւոր հոտին պատվիրում է հեռու մնալ քարթվել-վրացիներից, ովքեր «ժահահոտ ուսմունքը (քաղկեդոնականությունը.- Հ.Դ.) մեծարանքով ընդունեցին»[71]:

Պատմական փաստաթուղթ դառնալու ճակատագիր էր վիճակված այս գրությանը: Նրանով է նշանավորվում եկեղեցական մեկ կառույցի կազմում գտնվող քրիստոնեական երկու համայնքների սահմանազատումը միմյանցից: Այդպես է ասում Ուխտանեսը Ժ. դարում՝ «Աբրահամը... ամեն ինչի համար [Սուրբ] Հոգու սրով կտրեց-բաժանեց»[72]: Բաժանման գարեթիվն ամրագրվում է շրջաբերականով, ինչպես գրում է Մխիթար Գոշը՝ «Տէր Աբրահամ, առ որով Վիրք ի բաց կացին ի միաբանութենէ Հայոց»[73],

68 Տե՛ս **А. Аннинский**, История Армянской церкви (до XIX века), Кишинев, 1900, с. 98; Очерки истории Грузии (в 8-и т.), т. 2: Грузия в IV-X веках, гл. IX, • 4, Тбилиси, 1988. Автор главы Т. Папуашвили:

69 Տե՛ս **Ն. Ակինեան**, նշվ. աշխ., էջ 11:

70 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 204:

71 Անդ, էջ 209:

72 Անդ, էջ 205:

73 **Մխիթար Գոշ**, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, «Գանձասար», Ջ., 1996, էջ 350:

ինչպես գրում է Ն. Ադոնցը՝ «Վրաց պաշտոնական խզումը կատարվեց 609 թվին»[74] եւ այլք: Ոմանց անձը հիշատակվում է հենց այս շրջաբերականի կապակցությամբ: Կեկելիձեն հայտարարում է, թե՝ «Կյուրիոնը... համառ պայքար մղեց... վերջնականապես խզեց կապերը հայերի հետ եւ վրաց եկեղեցին դուրս բերեց... ազգային զարգացման ուղի»[75]: Կարծում ենք, որ շրջաբերականը այդ ամենի հետ կապ չունի, եւ շրջաբերականով այդ ամենը անհնար է բացատրել:

Փավստոսը մի նախադեպ է պատմում. «Կեսարիայի եպիսկոպոսապետը լսեց, թե մեծ Ներսես հայրապետին սպանեցին եւ նրա փոխանակ նշանակեցին Հուսիկին, առանց իր հրամանի՝ հակառակ նախկին սովորության, որ Կեսարիայի հայրապետի մոտ էին գանում ձեռնադրության համար: Այս բանի պատճառով Կեսարիայի հայրապետը շատ զայրացավ: **Կեսարիայի նահանգի եպիսկոպոսների այունհոդոսական ժողով գումարվեց** (ընդգծ. մերն է.- Հ.Դ.), որ ցասմնալից թուղթ գրեց (Հուսիկ) հայրապետին: Նույնպես թուղթ գրեցին Պապ թագավորին եւ (Հայոց) կաթողիկոսների իշխանությունը լուծեցին...»[76]: Այս առումով ինչպես Դ. դարում, այնպես էլ Է. դարում ոչինչ չէր փոխվել. եկեղեցիների բաժանումը կարող էր կատարվել միմիայն կոլեգիալ վճռով, այն է՝ եկեղեցական ժողովի որոշմամբ: Կաթողիկոսական Թուղթը փվյալ դեպքում թուղթ է առանց իրավական ուժի, եւ չի կարող իր վրա վերցնել այն գործառությունը, ինչը հատկացվում է նրան, այսինքն՝ եկեղեցիների բաժանիչի դերը: Հովհաննես Դրասխանակերտցին եւ Ստեփանոս Օրբելյանը հակասությունը վերացնելու համար Շրջաբերական գրելու որոշումը առանձնաշնորհում են Դվինի Գ. ժողովին: Նրանք եկեղեցական իրավունքի խոշոր գիտակ էին եւ քաջատեղյակ, որ Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու անջատումը Աբրահամի շրջաբերականին վերագրելով՝ խախտվում է Կոստանդնուպոլսի Տիեզերական ժողովի հետեւյալ կանոնը՝ «իւրաքանչիւր աշխարհի գործերը կկարգադրուին նոյն աշխարհի եպիսկոպոսների ժողովով, ինչպէս որոշուած է Նիկիայում»: Հայոց եկեղեցին իրեն նման բան թույլ տալ չէր կարող, որովհետեւ կշեղվեր իր ճանաչած Տիեզերական ժողովի ընդունած դրույթից:

Այսպիսով, առանց երկբայության կարող ենք պնդել, որ Աբրահամ կաթողիկոսը մի շրջաբերական նամակով չէր կարող իրեն վստահված եկեղեցին մասնատել: Ավելին, Շրջաբերականը ոչ միայն նման բնույթ ու բովանդակություն չուներ, այլեւ նրա նպատակն այլ էր: Շրջաբերականով Աբրահամը ոչ թե Վրաց եկեղեցին անջատում ու հեռացնում էր Հայոց եկեղեցուց, այլ՝ սխալ ուղի բռնելու համար նրան պատժում էր ժամանակավորապես մեկուսացնելու միջոցով, բաց պահելով ճշմարիտ ուղի վերադառնալու ճանապարհը: Շրջաբերականի տողերից են. «Նախկինում հռոմների վրայ մեր վարդապետների դրած բանադրանքը, որը **կը մնայ մինչեւ վերջ, եթէ չդառնան ճշմարիտ [հաւատին]**, մենք նոյնը վրացիների վրայ հրամայեցինք դնել... Իսկ մենք չենք լռի խրատելուց, քանի դեռ կենդանի ենք, եւ մեզնից յետոյ [եկողներին էլ] **աղա-**

74 **Ն. Ադոնց**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Երկեր, հ. Բ., Երեւան, 2006, էջ 443:

75 **Կ. Кекелидзе**, նշվ. աշխ.:

76 **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երեւան, 1987, էջ 345-347:

**չում ենք նախանձաւոր լինել մեզ՝ նրանց ուղղութեան բերելու համար** (ընդգծ. մերն են.-Հ.Դ.)»[77]:

Շրջաբերականը ժողովի որոշում չէ: Ժողովն անցավ, որոշում չկայացվեց: Պատճառն այն էր, որ մինչեւ ժողովի ավարտը հույս կար, թե Կյուրիոնի հետ ընդհանուր լեզու կգտնվի, իսկ ժողովից հետո շրջաբերական գրվեց, որովհետեւ Կյուրիոնը կտրականապես մերժեց ընդունել ժողովի որոշումները, հետեւաբար համարժեք քայլով նրան պատասխանելը պարտադիր էր: Ըստ էության, շրջաբերականը միջանկյալ մի փաստաթուղթ էր, որը մի կողմից նախազգուշացնում էր ըմբոստանալու հետեւանքների մասին, մյուս կողմից՝ հարցը նախապատրաստող գրավոր վկայություն էր՝ համապատասխան ապյանում քննելու համար: Շտապելու կարիք չկար. նման հարցերը երբեմն տասնյակ տարիներով էին սպասում իրենց լուծմանը: Այս դեպքում, երբ վրացիները համառեցին՝ ապյանն ամենեւին չուշացավ: Խոսքը Պարսից ժողովի մասին է: Բավարար հիմքեր կան, որպեսզի արձանագրվի, որ այս ժողովի որոշմամբ Վիրքի (Քարթլիի) եկեղեցին կրկին անցավ Հայոց եկեղեցու ենթակայության տակ, եւ այդպես մնաց առնվազն մինչեւ 627 թվականը, երբ Հերակլ կայսրը գլխովին ջախջախեց Խոսրովի զորքը եւ, փաստորեն, Պարսից տերության կործանման սկիզբը դրեց:

Եզրափակելով՝ նշենք վերջապես, որ վստահաբար 600-ական թվականներին չէ, որ «Վրաց եկեղեցին բաժանվել է Հայ եկեղեցուց»[78], որովհետեւ նման պնդումի համար, ինչպես տեսանք, որ ապացույցներ չկան: Հետեւաբար, անհրաժեշտ է մեր պատմության այս դրվագը ամբողջությամբ վերանայել, Դվինի Գ. ժողովը եւ Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականը չկապել Հայքի եւ Վիրքի եկեղեցիների բաժանման հետ, 609 թվականը համարել հիշյալ շրջաբերականի հրապարակման, ոչ թե քարթվելներին (վրացիներին) հայերից հեռացնելու տարեթիվ: Այդպես է հավաստիացվել, որովհետեւ, որքան էլ տարօրինակ է, դա հարմար է եղել եւ՛ վրացիներին, եւ՛ հայերին: Վրացիներին, որովհետեւ դա հաղթանակ էր նրանց համար[79] եւ սեփական պատմությունը հնացնելու եւս մեկ հնարավորություն, եւ հայերին, որովհետեւ Պարսից ժողովը, այնուամենայնիվ, իրենց հրավիրած ժողովը չէր, նրա պտուղներն էլ հնարավոր չեղավ երկար վայելել, հետեւապես գերադասվեց բաժանում համարել հենց խռովության սկիզբը:

Ահա սա է պատճառը, որ շատ հին ու նոր ուսումնասիրողների համար անհասկանալի է, թե ով ումից է հեռացել՝ հայերը վրացիների՞ց, թե՞ վրացիները հայերից, կամ գուցե ինչ-որ մի պահից երկու կողմերն էլ պարզապես համակերպվել են առանձին-առանձին ապրելու մտքի՞ն: Այդ դեպքում, ինչո՞ւ հայերը դեռ երկար չէին կարողանում հաշտվել վրացիների հեռանալու փաստի հետ, իսկ վրացիները, հեռանալով, թշնամացան հայերի հետ: Սրանք առկախ մնացած հարցեր են, որոնց համար եթե շարունակենք ընդունել հարմարեցված պատմությունը, ապա ոչ միայն նորից անհասկանալի ու անո-

77 **Ուխտանէս**, նշվ. աշխ., էջ 209-210:

78 «Քրիստոնյա Հայաստան», էջ 543:

79 Ի. Ճավճավաձեն Շրջաբերականը նույնիսկ առիթ է դարձնում հայերին ֆանատիզմի մեջ մեղադրելու համար, տես **И. Чавчавадзе**, Армянские ученые и вопиющие камни, Тифлис, 1902, էջ 9:

ոռշ կթողնենք հարցականները, այլեւ չենք պարզի հաջորդ դարերի հայ-վրացական հարաբերությունների պատմությունը, գումարած՝ 1103 թ. Ռուիս-Ուրբնիսի Վրաց եկեղեցու հիմնադիր ժողովում հայերի վերաբերյալ առանձին կանոն բանաձեւելու պատճառները: Մինչ այդ, ուրեմն, Վրաց եկեղեցի ասելն անախրոնիզմ է, որովհետեւ Վրաց, նշանակում է վրացիների, այսինքն՝ Վրաստանի եկեղեցի, մինչդեռ Է. դարում Վրաստան եւ վրացիներ այսօրվա հասկացողությամբ գոյություն չունեին: Կար Քարթլի, որ է Վիրք, եւ կար Քարթլիի եկեղեցի[80], որ է վիրացիների, այսինքն՝ քարթվելների եկեղեցի: Այն ժամանակվա Վրաց եկեղեցի պետք է համարել միայն Վիրքի, իմա՛ Քարթլիի եկեղեցին, որի հոգեւոր տիրույթն ընդգրկում էր Մցխեթն ու նրա շրջակա տարածքները, եւ որն ամենասերտ կապերն ուներ Հայոց եկեղեցու հետ: Հենց Քարթլիի այս փոքրիկ եկեղեցին էր Մեծ Հայքի եկեղեցու համար հարցեր առաջացրել: Իսկ Վրաստանը, ըստ այդմ եւ Վրաց եկեղեցին, դեռ նոր պիտի կազմավորվեր ու ներառներ նաեւ Քարթլին ու Քարթլիի եկեղեցին:

80 Վրացի եւ այլազգի հետազոտողների համար գործածական է Քարթլիի եկեղեցի եզրը, որ նշանակում է նախավրացական եկեղեցի, իսկ հայ պատմաբանների համար գործածական չէ. դրանով նրանք երբեմն պատմագիտական խառնաշփոթ են ստեղծում: